**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**
**ՈՐՈՇՈՒՄԸ**

---

# 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 28 մարտի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լ. Նանուշյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի հոկտեմբերի 28-ին Աստանայում ստորագրված «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի փետրվարի 9-ի N 149-Ա որոշմամբ հավանություն է տվել 2022 թվականի հոկտեմբերի 28-ին Աստանայում ստորագրված «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի փետրվարի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

**1**. «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի հոկտեմբերի 28-ին Աստանայում՝ հանրային առողջապահության ոլորտում Հայաստանի Հանրապետության և Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջև համագործակցությունը ընդլայնելու նպատակով:

**2.** Համաձայնագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագրի մասնակից պետություններից (այսուհետ՝ Կողմեր) մեկի պետության տարածքում անդրսահմանային տարածման պոտենցիալ ունեցող արտակարգ իրավիճակի առաջացման կամ դրա առաջացման վտանգի ի հայտ գալու դեպքում տվյալ Կողմն արտակարգ իրավիճակի առաջացման փաստի մասին տեղեկացնում է մյուս Կողմերի իրավասու մար-

միններին, ինչպես նաև Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ տվյալ ոլորտում համապատասխան բազային կազմակերպությանը:

**3.** Համաձայնագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ Կողմերից մեկի պետությունը, որի տարածքում առաջացել է արտակարգ իրավիճակը, օգնություն տրամադրելու հարցմամբ դիմում է մյուս Կողմի պետությանը կամ Կողմերի պետություններին, արտակարգ իրավիճակի վերացման համար կարող են ներգրավվել մյուս Կողմերի պետությունների մասնագիտացված հակահամաճարակային բրիգադները:

**4.** Համաձայնագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը միմյանց օգնություն են ցուցաբերում իրենց հնարավորություններին համապատասխան և կամավորության հիմունքով:

Կողմերից մեկի պետության մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների մասնակցությունը մեկ այլ Կողմի պետության տարածքում արտակարգ իրավիճակի վերացման գործում իրականացվում է հայցող Կողմի օրենսդրությանը, Համաձայնագրին համապատասխան և Կողմերի պետությունների միջև կնքվող երկկողմ միջազգային պայմանագրերի հիման վրա:

**5.** Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորությունները, մասնավորապես՝

**5.1. իրականացնել** պետական սահմանով մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների առաջնահերթ բացթողման համար անհրաժեշտ միջոցառումները, **ապահովել** Հայաստանի Հանրապետության տարածքով դեպի արտակարգ իրավիճակի գոտի տեղաշարժվելիս նրանց ուղեկցումը, ներառյալ պաշտպանությունը, ինչպես նաև **տրամադրել** արտակարգ իրավիճակների կանխարգելման և (կամ) վերացման նպատակներով օգտագործվող սարքավորումների և գույքի՝ տրամադրող Կողմի պետության տարածք վերադարձի երաշխիքներ (հոդված 6),

**5.2. ազատել** մաքսատուրքերի, մաքսային վճարների և հարկերի վճարումից Հայաստանի Հանրապետության պետական (մաքսային) սահմաններով տեղափոխվող, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքներով տարանցիկ տեղափոխվող հանդերձանքը և ծախսանյութերը (հոդված 8, պարբերություն 2),

**5.3. նպաստել** արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման նպատակով հայցող Կողմի պետության տարածք ուղևորվող՝ տրամադրող Կողմի մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների, հանդերձանքի և ծախսանյութերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքով անարգել տարանցմանը (հոդված 9),

**5.4. կրել** այն ծախսերը, որոնք կապված են մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների անդամների աշխատանքի վարձատրության, բրիգադների անձնակազմի և գույքի ապահովագրության հատուցման ծախսերի, ինչպես նաև մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների՝ դեպի արտակարգ իրավիճակի գոտի և հակառակ ուղղությամբ փոխադրման հետ (հոդված 12, պարբերություն 1),

**5.5. իրականացնել** Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքներում մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների՝ համաճարակաբանական աշխատանքի տեխնոլոգիային, լաբորատոր ախտորոշմանը, հակահամաճարակային միջոցառումների անցկացմանը վերաբերող գործունեություն (հոդված 15):

**6.** Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանա-

դրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածնե-
րով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

**1.** 2022 թվականի հոկտեմբերի 28-ին Աստանայում ստորագրված «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

**2.** Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

28 մարտի 2023 թվականի
ՍԴՈ-1682